


նան այս աղեղներու ծանրութիւնը եւ ուժը: Մինչդեռ՝ արտաքին որմերուն վրայ ուղղակի կը կոթնին այս աղեղները, հաղիւ թէ նշմարելի յաւելուածական հաստութիւն մը տալով սոյն որմերուն:



Պատ. 6. - Հռոմոսի վանք

Մեծ սրահի հատուածը, աղեղներու խաչաձեւումը ցոյց տուող

Այս ձեւ յարգարումով, թէեւ մէկ որմէն միւսը, միջոցը 8.20 մեղր է, աղեղները ունին 7.70 մեղր բացուածք մը (պատ. 6):

Չորս աղեղներու համադրութեան դրութիւնը, ջիւերու ճարտարապետութեան սկզբնական ձեւն է: Այս դրութեամբ շինութիւնները շատ ընդհանրացած են Հայաստանի մէջ: Բացի Հռոմոսէ, նման շինուածքներ կը տեսնենք Խորա-կերտի վանքին եւ Հաղբատի ժամատան մէջ:

(Շարունակելի)

Ս. ձեզԱՀԻՐՁԵԱՆ

ձարտարագէտ



## ՈՐ Բ Ը

Անձուկ համբէն կ'անցնի միմակ.  
Հոգ մ'ուսերուն՝ հէգ աղջըմակ:

Չունի ո՛չ հայր եւ ո՛չ մայրիկ.  
Ի՛նչպէս եղէգն երեք - նըկուն՝  
Կը դողդոջէ ոտաբոսիկ,  
Հացի կարօտ ու միշտ անհուն:

Որքն անտէրունջ համբէն անհետ՝  
Լու՛ն կը փայլէ արեւուն հետ:

Պուրբէշ, 23 - ր - 1940

Թ. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ



Թարգմ. Անդր. Է

ՍԱՐԳԻՍ ԱՇՁԵԱՆ\*

(\*) Պոլսոյ Վիեննայի Միթրաբեան Հայրերուն Լիկէոնին շրջանաւարտ աշակերտ, որ ինքնաբերաբար դիմումով մը կ'ուզէ «Իբր Միթրաբեան» տեւականօրէն իր աշխատակցութիւնը բերել «Բազմավէպ»ի: Տեղի պակասով չկրցանք զետեղել միւս կողմերը: Խնդակցութիւններ եւ յաջողութիւն իր ապագային:

ԽՄԲ.

## Փ Ո Ր Ձ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի՞նչ է կայքատօնն այս խօլ ու անոյշ,  
Ծիծաղ ու խրճիղ, երգ, ծափ, ալիւ.  
Ուր այրեր եւ կիւն, անխիղճ, անզգոյշ,  
Կը վագեն անժոյժ բաժին առնելու:

Մեծ դուռն է նըման նուրի՝ մը հաքած.  
Ու սրահը տրոփո՛ւն, բոստ՛ը սըրտի՛ պէս.  
Հանո՛յք, - հոս մահն է անգոր ու անլաց,  
Անտես քո՛ւրմ է դեւն, մերկութիւնը՝ ծէս.

Սըրաբբա՛ծ՝ երգին կըշռով կը հիւսուին  
Իրարու ձեռք, ոտք, լանջք, կուրծք ու անրակ.  
Առագաստ ու կայմ, - փարած կաթոգին,  
Կը պարեն գոյգերն ախորժով անյագ...

Բո՛րբ քահեբուն տակ միսեր գեղելոր.  
Կը վառի՛ն հագած սընդուս ու բեկեղ.  
Սըրտէ՛ - սիրտ կ'անցնի սարսու՛ւս եւ օրօր...  
Կը փընտռէ բեւեռն բեւե՛ռ սեւագէս...

Սեղաններուն վրայ կայ հաց եւ գինի.  
Ո՛ւմպ - ումպ կը լեցուի արդ ամէն բաժակ.  
Ամէն բաժակ սի՛րտ, բո՛ց մ'է կենդանի,  
Մարմինն՝ ապակի, հոգին՝ հրակայակ:

Սեղաններու շուրջ կայ կիրք եւ հրապոյր...  
Կը մուծի արեան մէջ տենդ մ'ապստամբ.  
Կ'ուզեմ քօթափել փոյթ լուծ ու անուր.  
Կ'իջնէ սըրտիս մէջ վիշապ, աչքիս՝ ամբ...

- Ո՞վ է կը հըսկէ խըղճիս մէջ նորէն.  
Լըռի՛ղ կ'արիւնի Սի՛րտ մը կարեկեր  
Աստղի պէս քալօջալ, անտէր ու անգէն.  
... Կարծես կը կանչէ իմ սի՛րտըս երեք...

- Ո՞վ է կը հըծծէ խաւարին մէջ գութ.  
Մարմին մը կապուած ձաղկանքի սիւնին,  
Ձեռք մը կը կըռփէ՛... - Դո՛ւժ կըրկներեւոյթ, -  
Ես մերթ՝ այդ ձե՛ռքն եմ եւ մերթ՝ այդ մարմինն...

- Ո՞վ փարերուն վրայ կ'իյնայ դիտապատ.  
Խաչին փաթթուած տի՛ղմ է քէ հաճանջ.  
Կը շաչէ՛ մըտքակն ու ոտքեր անաստ  
Կի՛ց կու տան իր մերկ լանջին ցաւատանջ...

... Կը փայլէ հաճա՛նջ մ'իմծի հետ նորէն  
Վէրք մը համբուս վրայ կ'արիւնի՛ անգուլ.  
Սուրբեր ու հրեշտակ շուրջս կ'աղօթեն.  
Սո՛ւր մը, խըղճի՛ս մէջ, կը հօնէ նըշոյլ...

Պի՛նդ կը սարսէ զիս ըստուեր մը դաժան.  
- Չո՛ւր է եւ ունայն ամէն վիշտ ու գոհ,  
Սոսկ Մեղքն է հըգոր, գեղեցի՛կ, արժան.  
Տե՛ս, կեանքը բեռ մ'է ու Մահը՝ անդու...

... Փա՛ռք, երջանկութի՛ւն, սէ՛ր, - բառեր ոսի՛ն.  
Մարդն ամենուր խե՛ղմ, - փուտ կըմախք ու գանկ.  
Ի՞նչ է Գոյութեան հանգոյցը վերջին.  
Աստուած քէ ոչինչ. պատիժ քէ ձաղանք:

Ծարա՛ւ ու ճօթի, կը յաժիմ անքառ,  
Ծագէ՛ծագ, համայն երկիր ու երկինք.  
Կը հեպեմ անխոնջ դարերէ ի դար.  
- Չըկա՛յ երազիս ոչ ծիրն ու ոչ կիճէ...

Ու արիւնի՛ս մէջ կը կըրեմ լըռին,  
Հարի՛ւր սերունդի երազն ու երկունք.  
Մինչեւ մահը տայ խեղճ հողը հողին,  
Ու անյագ փըշրէ տենջ, դըժոխք ու մոյմք...

Դափ մը կը սըփռէ սարսու՛ւս ու ծիծաղ.  
Շուրջս կը պարեն կիճեր գեղալանջ.  
Լո՛յս մը կը մարէ ամէն ծեփ ու խաղ.  
Կը վառէ Օձն իր աչքերը կանանջ...

Հրապոյրն՝ անքառամ, կիրքն իմ մէջ՝ անշէ՛ջ.  
- Մընա՞լ քէ մեկնիլ: - Երկրնորանք անոյժ:  
... Կիւս մը շաղակրատ, ձեռքով յուսարէջ,  
Սըրտիս խառնկին կը հետէ ալիւ՛ւց...

1938, Պուրբէշ

ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆ

